Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1-ի N 91 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՅՐԱՏՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ցուցաբերել սոցիալական, առողջապահական և հոգեբանական աջակցություն հասարակության ամենախոցելի խմբերին, ինչպես նաև նպաստել նրանց մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: 1. Բոլոր տեսակի բռնության ենթարկված անօթևան կանայք, ովքեր ունեն մինչև 7 տարեկան երեխա (երեխաներ). 2. Հղիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսվում է օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի քաղաքացիներ, Կալիֆոռնիա Նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը Սեթա -Յունիս Ղազարյան Ենովքի (անձնագրի N AA0002802, տրված է 21.10.2013 թ., 02-ի կողմից) Ջուրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագրի N AA0002801, տրված է 21.10.2013 թ., 02-ի կողմից)
4.	Ծրագիրը կատարողը	«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Չարենցի 58-5, գործող հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1, հեռ. 043 500 503, 0 դրամ սակագնով թեժ գիծ՝ 20-80, ՀՎՀՀ 01557357
5.	Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1
6.	Ծրագրի բյուջեն	627500 (վեց հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, տարեկան՝ 125500 հարյուր քսան հինգ հազար հինգ հարյուր ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ)
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ-ում և ԼՂՀ-ում բնակվող՝ 1. Բոլոր տեսակի բռնության ենթարկված անօթևան կանայք, ովքեր ունեն մինչև 7 տարեկան երեխա (երեխաներ).

		2. Հղիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Մայրատուն» ծրագրի շրջանակներում շահառուները կարող են ապաստան գտնել ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք գյուղի Վարդանանց 1 հասցեում գտնվող՝ հիմնադրամին պատկանող շենքում: Ապաստանում կարող են բնակություն հաստատել բռնության ենթարկված և անօթևան հղիներ և կանայք, ովքեր ունեն մինչև 7 տարեկան երեխա (երեխաներ): «Մայրատանը» նրանք ստանում են ՝ 1. մոր և երեխայի համար նախատեսված սենյակ (անվճար). 2. չորսանգամյա սնունդ, 135000 հարյուր երեսունհինգ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $27000). 3. հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ և այն ամենն ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը 411500 չորս հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $82300). 4. գինեկոլոգ-մանկաբարձի և ատամնաբույժի անվճար ծառայություններ (նշված մասնագետները մատուցում են կամավորական ծառայություն). 5. ծրագիրն ունի նաև ուսումնադաստիարակչական նպատակ, որի իրակա-նացման համար ծառայում են հիմնադրամի համակարգչային սենյակը, խաղասենյակը, կարի սենյակը, ֆիլմերի ցուցադրման համար նախատեսված սենյակը, մատնահարդարի և վարսահարդարի սենյակներ (նշված ծառայություն-ներն անվճար են). 6. 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպչական ծախսերը կազմում են՝ 81000 ութսունմեկ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $16200): 1. Կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր) 40000 քառասուն հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $8000). 2. Հեռախոսային և ինտերնետային ծառայություններ 7000 յոթ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $1400). 3. Հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը) 34000 երեսունչորս հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $6800):

		Նշված միջոցառումներն իրականացվելու են 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2019 թ. հունվարի 1-ից 2023 թ. դեկտեմբերի 31-ը ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է՝ 1. սննդի ձեռքբերում ՀՀ տարածքում 135000 հարյուր երեսունհինգ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $27000). 2. հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը 411500 չորս հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $82300). 3. կոմունալ ծառայությունների ձեռքբերում (գազ, էլեկտրաէներգիա, ջուր) 40000 քառասուն հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $8000). 4. հեռախոսային և ինտերնետային ծառայությունների ձեռքբերում 7000 յոթ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $1400):
11.	Կազմակերպչական ծախսեր	2019 թ. հուվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպչական ծախսերը կազմում են՝ 81000 ութսունմեկ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $16200) 1. Կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր) 40000 քառասուն հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $8000). 2. Հեռախոսային և ինտերնետային ծառայություններ 7000 յոթ հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $1400). 3. Հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը) 34000 երեսունչորս հազար ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (տարեկան՝ $6800):
12.	Համագործակցությունը պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին և քույր եկեղեցիները, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակը, եվրոպական կառույցները, միջազգային և տեղական հասարակական, բարեգործական կազմակերպությունները, հիմնադրամները, համայնքները և թաղապետարանները, մարզպետարանները

		ՀԿ-ներ, ովքեր առնչվում են ընտանեկան բռնության և ընտանեկան համակարգի հետ սփյուռքահայեր, անհատ բարեգործներ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հոգաբարձուների խորհրդին հաշվետվության ներկայացում ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ